1606-1609 ԹԹ. ՄԵԾ ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

XVII դարի սկզբին Հայաստանում տեղի են ունենում ժողովրդագրական մի քանի աղետներ, որոնցից իրենց սոսկալի հետևանքներով առանձնանում են պարսից շահ Աբաս Ա-ի (1587-1629 թթ.) կողմից 1604 թ. կազմակերպված բռնագաղթը և 1606-1609 թթ. համատարած սովը: Սույն հոդվածում սկզբնաղբյուրների քննությամբ ներկայացնում ենք սովի պատճառները, ժամանակագրական և տարածքային ընդգրկումն ու հետևանքները:

Սովի պատճառների մեջ առանձնանում են՝

1. 1596-1610 (1591-1611) թթ. ջալալիական շարժումը Օսմանյան կայսրությունում,

2. 1603-1618 թթ. թուրք-պարսկական պատերազմի ակտիվ գործողությունների առաջին փուլը (1603-1606 թթ.) Հայաստանի տարածքում, այդ թվում՝ 1604 թ. բռնագաղթի ընթացքում ցանքատարածությունների ոչնչացումը,

3. XVI-XVII դարերի սահմանագլխին եղանակային պայմանների փոփոխությունը և մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը:

ա) Ջալալիական շարժման ազդեցությունը սովի առաջացման վրա: XVII դարի հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին սովի առաջնային պատճառ է համարում ջալալիական շարժումը: Հետաքրքիր է, որ նրա երկի 7-րդ գլուխը վերնագրված է՝ «Յաղագս յայտնելոյ Ջալալոցն եւ սաստիկ սովուն եւ մարդակեր գայլոցն, եւ այլ եւս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի»[1]: Հայ պատմագրի նմանօրինակ մոտեցումը միանգամայն ընդունելի է ժամանակակից հետազոտող Ս. Ուայթի համար, որն իր ուսումնասիրության մեջ շեշտում է հայ հեղինակի՝ առաջնային սկզբնաղբյուր լինելու հանգամանքը[2]:

«Ջալալիների» շարժումն իր անվանումն ստացել է 1519 թ. Թոխատում հակակառավարական ապստամբական ելույթ կազմակերպած ալևի քարոզիչ, շեյխ Ջալալի (Ջելալի) անունից: Օսմանյան կայսրությունում հետսուլեյմանյան ժամանակաշրջանում խորացող տնտեսական ճգնաժամը (դրամի արժեզրկումը և կենտրոնացված հարկման ծանրացումը), օսմանյան էֆենդիական խավի տնտեսական և ենիչերիների քաղաքական զորեղացումը, դնշիրմեի (մանկահավաքի) համակարգի քայքայմանը զուգընթաց մահմեդական միջին հողատերերի ռազմական ուժի շահագործումը, ինչպես նաև հարևան պետություններում առկա հա-

[1] **Առաքել Դավրիժեցի,** Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Եր., 1990, էջ 103:

[2] Տե՛ս **S. White,** The Climate of Rebellion in the Early Modern Ottoman Empire, New York: Cambridge University Press, 2013, էջ 183-184:

սարակական-քաղաքական խնդիրներն այնպիսի մտայնություն էին առաջացրել օսմանյան թիմարների (տարեկան 20 հազար ակչեից պակաս հարկ վճարելու պարտավորությամբ պարգևական հողերի) տեր սիպահիների շրջանում, թե իրենց նվազող դիրքերը հնարավոր է ամրապնդել ռազմական գործողություններ իրականացնելով[3]: Սա, բնականաբար, դիտվելու էր որպես կենտրոնական իշխանությունների դեմ անհնազանդություն: Նման մտայնությունը համակեց նախնառաջ կայսրության փոքրասիական նահանգները, որտեղ թիմարներ ունեցող առաջնորդներին հաճախ տանում էին իրենց հողերից հեռու՝ եվրոպական երկրների դեմ պատերազմելու: Թեև Ա. Տվերիտինովան և Մ. Զուլալյանը ջալալիների գործողությունները համարում են օսմանյան իշխանությունների դեմ ուղղված գյուղացիական շարժում[4], այդուհանդերձ Ա. Աբրահամյանն իրավացիորեն կարծում է, որ ջալալիների շարժումը գյուղացիական չէր[5]: Եվ իսկապես, շարժումն արտահայտում էր միջին հողատերերի շահերը օսմանյան կենտրոնական իշխանության ժամանակավոր թուլացման պայմաններում՝ ծանր դրության մեջ դնելով հատկապես ոչ մահմեդականներին, այդ թվում՝ հայ բնակչությանը: Սկիզբ առած զանգվածային թալանը, հարկային լրացուցիչ պարտավորությունները, այնուհետև՝ համատարած սովը և ժանտախտի համաճարակն ստիպում են հայ բնակչությանը դիմել զանգվածային արտագաղթի[6]:

Ջալալիական շարժումն ընդգրկում էր Սիրիան, Իրաքը, Փոքր Ասիան, Ռումելին, Արևմտյան Հայաստանը, որոնցում տնտեսական կյանքը, հատկապես՝ առևտուրը և գյուղատնտեսությունը խաթարվել էին[7]: XVII դարի թուրք պատմագիր Քյաթիբ Չելեբին «Ֆեզլեքե» աշխատության առաջին հատորում նկարագրում է ջալալիական շարժման առաջին ալիքը և Կարա Յազըջիի[8] ապստամբությունն Ուրֆայում 1596-1601 թթ.[9], այնուհետև՝ Դելի Հասանի ելույթը[10]: Ըստ թուրք հեղինակի՝ այս ապստամբությունների հետևանքով գրեթե կրկնակի արժեզրկվել են օսմանյան ակչեն և դուրուշը[11]: Նրա հավաստմամբ՝ ջալալիական շարժումը 7-

---

[3] Տե՛ս **W. J. Griswold,** The Great Anatolian Rebellion (1000–1020/1591–1611), Islamkundliche Untersuchungen, vol. 83, Berlin: Klaus Schwarz Verlag, 1983, էջ 27-78:

[4] Տե՛ս **А. Тверитинова.** Восстание Кара Языджи – Дели Хасана в Турции., М.-Л., 1946, էջ 59, 71, 78, **Մ. Զուլալյան,** Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Եր., 1966, էջ 130-131, 139, 217-218:

[5] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974, էջ ԺԳ (առաջաբան):

[6] Սույն հոդվածում արտագաղթի մասին մանրամասն չենք խոսում, քանի որ նախատեսել ենք այդ խնդրին առանձին հոդվածով անդրադառնալ:

[7] Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց՝ Ա. Սաֆրաստյան, հ. Բ, Եր., 1964, էջ 75: Տե՛ս նաև **Մ. Զուլալյան,** Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980, էջ 135-147:

[8] Կարա Յազըջին հայկական, օսմանյան և եվրոպական սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև Կարա Յազիջի, Կարա Յազիճի, Կարա Յազըճի, Կարա Յազըչի, Ղարա Յազիջի, Ղարա Յազըջի, Ղարա Յազիչի և նմանատիպ այլ ձևերով: Մենք առաջնային ենք համարել թուրքական սկզբնաղբյուրներում օգտագործվող գրելաձևը, քանի որ Կարա Յազըջին օսմանյան իրականության ներկայացուցիչ էր:

[9] Տե՛ս «Թուրքական աղբյուրները», հ. Բ, էջ 79-81:

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 82-85:

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 80:

8 տարի է տևել՝ մինչև 1607 թ., որի հետևանքով Օսմանյան կայսրության արևելքում երթևեկությունը խանգարվել է 15 տարով[12]: Սա հանգեցնում էր նշված տարածքներով միջազգային առևտրի խաթարմանը:

Առաքել Դավրիժեցու բնորոշմամբ՝ Յազըջիի և Հասանի ապստամբությունների հետևանքով Ամիդից (Դիարբեքիրից) կես օրվա տարածությունից հետո մինչև Կոստանդնուպոլիս ավերակ էր[13]: Աշխատության մեկ այլ հատվածում պատմիչը ևս մեկ անգամ նշում է, որ ջալալիների ավերածությունների պատճառով Կոստանդնուպոլսից մինչև Երևան ավերակ էր դարձել, և այս պատճառով «հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յահէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեին: Եւ սկսաւ լինիլ սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ո՛չ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր գնոյ»[14]: Փաստորեն, ջալալիների շարժման պատճառով անձի ապահովությունից զրկված գյուղացիությունը դուրս չէր գալիս դաշտ, ջալալիները չէին թողել նաև անասուն և սերմացու: Այս ամենը հանգեցրել էր ապրանքների բազմակի գնաճի, հատկապես՝ հացի և աղի, ընդ որում՝ այն ընդգրկել էր թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանը[15]:

Այս իրավիճակը հանգեցրել էր և՛ միջազգային առևտրի, և՛ գյուղատնտեսական գործունեության արգելակմանը: Քանի որ մարդու սննդի առնվազն 80 %-ն ուշ միջնադարում ստացվում էր հողից[16], հողագործական աշխատանքների խափանումը կարող էր հանգեցնել ժողովրդագրական մեծ աղետի՝ համատարած սովի: Ավելին, առևտրային կապերի խզումն իր հերթին զրկում էր սննդի և այլ ռեսուրսների այլընտրանքից, ինչը ևս սովի առաջացման նպաստավոր պայման էր:

XVII դարի թուրք պատմագիր Կոչի բեյը ներկայացնում է տնտեսական կյանքի վատթարացման ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա՝ նշելով, որ ջալալիական շարժումն ընդգրկել է Անատոլիայի, Կարամանի, Սեբաստիայի, Մարաշի, Հալեպի, Դամասկոսի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Վանի և Մոսուլի նահանգների գյուղերն ու գյուղաքաղաքները, որոնք ավերվել են. «Վրանաբնակները և թուրքմեն ցեղերը, հպատակությունից դուրս գալով, աղքատ ռայաների նկատմամբ ծայր աստիճանի բռնություններ գործադրեցին, որի պատճառով բազմաթիվ գյուղեր ավերվեցին»[17]: Ռայաների, այսինքն՝ ոչ մուսուլման հպատակների վիճակի մասին շարունակելով խոսել՝ նա արձանագրում է, որ նրանք հարկատու են, ուստի նրանց ապահովու-

---

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 82, 84:

[13] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 429:

[14] Նույն տեղում, էջ 108:

[15] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, հիշատակարաններ № 166, 224, 244, 254, 345, 354, 366, 549: Վերջինս Ազարիա Սասնեցու կողմից գրված հիշատակարանն է, որ քանիցս հղվել է Մ. Զուլալյանի աշխատություններում:

[16] Տե՛ս **Մ. Լ. Бачи.** Демографическая история Европы (II тысячилетие). СПб., 2010, էջ 18-19, 22-23:

[17] «Թուրքական աղբյուրները», հ. Բ, էջ 231:

թյունը պետք է իբր երաշխավորված լինի արդարադատությամբ, «իսկ ներկայումս աշխարհը քայքայված է, ռայաները ցրված են, գանձարանը դատարկ է…»[18]: Այսպիսով, թուրք հեղինակը ցույց է տալիս ջալալիական շարժման բացասական ազդեցությունը ոչ մուսուլման, հետևաբար և հայ բնակչության ժողովրդագրական գործընթացների վրա: Պատահական չէ XVII դարի հայ մատենագիր, եկեղեցական գործիչ Գրիգոր Դարանաղցին նշում, որ ջալալիների շարժումից առանձնակի տուժել է «տառապեալ վշտատես ազգացս (ազգս – Մ.Մ.) Հայոց աշխարհին»[19]: Համանման տեղեկություններ է հաղորդում նաև Առաքել Դավրիժեցին:

Հայկական աղբյուրներում ջալալիների մասին հիշատակումներն ի հայտ են գալիս 1591 թ.: 1611 թ. մի հիշատակարանում ջալալիների շարժումը ներկայացվում է 1591-1611 թթ.[20]: Ավելի ուշ շրջանի մի աղբյուրի՝ Անանուն Վանեցու տարեգրության (XVIII դար) համաձայն՝ Քոռօղլին, Գզիրօղլին և շատ ուրիշներ 1591 թ. ջալալի դարձան[21]: Մեկ այլ, անորոշ հիշատակում կա 1596 թվին. «…ջալալնի (ջալալին – Մ.Մ.) ելաւ յիւր աշխարհն ահ և փախ ի գեղ և ի գաւառ, և թալան շատ գործեցաւ...»[22]: Ի սկզբանե հիշատակությունների զգալի մասն առնչվում էր Արևմտյան Հայաստանի արևմտյան վարչամիավորներին: Սակայն վերը վկայակոչված 1611 թ. հիշատակարանում նշվում է անսովոր տարածք, մասնավորապես՝ Իբրահիմ բեկը 6 տարի ավերածություններ է կատարել Մուշում, ոմն Շարաֆ թալանել է Երևանը և Մշո դաշտը[23]: Բաբերդում ընդօրինակված ձեռագրի 1638 թ. հիշատակարանում ջալալիների շարժման սկիզբ է նշվում 1603 թ.[24], ինչը, անշուշտ, բխում է տեղական առանձնահատկությունից: Այսօրինակ հիշատակությունները ցույց են տալիս ջալալիական շարժման ժամանակագրական ընդգրկման և ասպատակիչ գործողությունների աշխարհագրության ընդարձակումը: Արդի ուսումնասիրություններում ջալալիական շարժումը թվագրվում է 1596-1610 թթ.[25], թեև դրանից առաջ (1591 թ.) և հետո (1611 թ.) առկա են դրվագային հիշատակություններ թե՛ օսմանյան և թե՛ հայկական սկզբնաղբյուրներում:

Պարսից շահ Աբաս Ա-ի կողմից «զբաժին արևելեայ աշխարհիս», այսինքն՝ Արևելյան Հայաստանն ավերելու, «սկսեալ ի Կոստանդնուպօլսէ մինչ ի յԵրևան քաղաք» օսմանյան ավերածությունների և ջալալիների «ի կողմանս երկրին Օսմանցւոց» առավել ասպատակելու հետևանքով Առաքել Դավրիժեցին թվարկում է 1599-1605 թթ. շուրջ երկու և կես տասնյակ ջալալի հրամանատարների անուններ՝ իրենց հազարավոր մարտիկներով: Նրանցից առաջինը խոսում է Կարա Յազըջիի

---

[18] Նույն տեղում, էջ 232:

[19] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատ.՝ Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 125-126 (այսուհետ՝ Գրիգոր Դարանաղցի):

[20] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 437-448:

[21] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 1, Եր., 1951, էջ 355:

[22] Նույն տեղում, էջ 173:

[23] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 437-448:

[24] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1978, էջ 723-724:

[25] Տե՛ս **S. White,** op. cit., էջ 185:

մասին, որը Ուռհայից, Թոխատից, Սեբաստիայից, Պրուսայից, Անկյուրիայից և այլ վայրերից երկու տարվա խարաջի հարկ է վերցրել[26]: 1600 թ. կառավարական բանակը՝ վեզիրի ղեկավարությամբ, Ուռհայից ուղարկվում է Ամիդ՝ Յազըջու դեմ, իսկ վերջինս, Ամիդից դուրս գալով, «ի Կոստանդնուպօլսէ մինչև Յամիթ (յԱմիդ – Մ.Մ.) գեաւղ և քաղաք շէն չեթող զամէնն աւերեց»[27]: Խաղալու գյուղում ընդօրինակված Շարակնոցի 1601 թ. հիշատակարանում Կարապետ երեցը խոսում է Կարա Յազըջիի կողմից քրիստոնյաների հալածանքների մասին[28], իսկ Վասպուրականի Կարմրավոր վանքում ընդօրինակված ժողովածուի 1603 թ. հիշատակարանում նշվում է Խիզանի Ս. Հակոբ վանքի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսի սպանության մասին[29]:

Փաստորեն, ջալալիական ապստամբական ելույթներն ուղեկցվել են թալանով և ջարդերով: 1601 թ. Կարա Յազըջին ջարդ կազմակերպեց Սեբաստիայում, 1602 թ. շարժվեց Թոխատ, Զելա, Ամասիա, Մարզվան, թալանեց եկեղեցական սպասք, գերեվարեց պատանի տղաների, և Թոխատի բնակիչները շուրջ 3 ամսով հեռացան քաղաքից[30]: Խիզան քաղաքում ընդօրինակված ձեռագրի 1603 թ. հիշատակարանում նշվում է, որ Կարա Յազըջին Թոխատն ավերեց, շատերին գերեց կամ սպանեց[31]: 1603 թ. Ստեփանոս Թոխատեցու թողած հիշատակարանում ասվում է, որ Թոխատում «Զ (6) Է (7) տարու ի վեր տղակներն զամէնն առին և հագուցին. զի մինչև ԻՌ (20000) տղայ առեր էին ի հայէ և ի տաճկէ. և բազում սարկաւագունք և տոլվաթորաց տղայք տարան և զծնօղսն աղէխարշ արարին»[32]: Սեբաստիայում և Խիզանում ընդօրինակված ձեռագրի 1603 թ. հիշատակարանում նշվում է, որ Յազըջին Սեբաստիայում ավելի քան 20 հազար մարդ կոտորեց, 800 «անմեղ տղայս ի Հայոց և ի Հոռոմոց գերի վարեաց»[33]: 1604 թ. մի հիշատակարանում էլ ասվում է, որ Կարա Յազըջին Սեբաստիայի գրավումից հետո «անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանկունս նոցա գերի տարեալ... ամայի մնաց Սեփաստիայ (Սեբաստիայ – Մ.Մ.) թեմովն և վիճակովն բազում ժամանակս, բայց գոհանամք զԱստուծոյ, զի յետ սակաւ ժամանակի եղև կրկին խաղաղութիւն, որ ցրուեալ և ճապաղեալ ժողովուրդն հաւաքեցան ի թվին ՌԾԳ (1604)»[34]: Փաստորեն, Կարա Յազըջիի ելույթն ուղեկցվել է Փոքր Հայքի և Հայոց Միջագետքի հայ բնակչության թալանով, սպանություններով, գերեվարություններով, ընդ որում՝ գերեվարվել են հիմնականում պատանի տղաները, որոնց հնարավոր էր օգտագործել կառավարական ուժերի դեմ ռազմական գործողությունների ժամանակ:

---

[26] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 107-108:

[27] «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 2, Եր., 1956, էջ 515: Հմմտ. էջ 516-518:

[28] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 40-41:

[29] Տե՛ս նույն տեղը, էջ 115-117:

[30] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 160:

[31] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 114-115:

[32] Նույն տեղում, էջ 125-126:

[33] Նույն տեղում, № 138: Հմմտ. № 354:

[34] Նույն տեղում, էջ 132-133:

Հայ հեղինակները գանգատվում են ոչ միայն Կարա Յազըջիի, այլև այլ ջալալիների գործողություններից: 1606 թ. հիշատակարանում Կիրակոս երեցը բողոքում է ջալալի Թավուլի գործունեությունից՝ «զԴ (4) կողմանս աշխարհիս աւերեց և այրեց զամէն քաղաք և զգիւղս. և գերի տարաւ զամէն ազգ թէ՛ հայ, թէ՛ տաճիկ. ո՛վ կարէ պատմել զանաւրէնութիւնն սորա ի սովոյ և ամենայն իրաց»[35]: 1606 թ. մեկ այլ հիշատակարանում ասվում է, որ Խարբերդի գավառում Թավուլը «Ե (5) ամիս ի դաշտըն նստաւ, զգեղորայքն այրեց, շինութիւն պակասեցաւ»[36]: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Թավուլի գործողություններից տուժել է ոչ միայն Խարբերդի գավառը, այլ նաև Բալուն[37]: Տրապիզոնում 1608 թ. գրված Ավետարանի մեկնության հիշատակարանում նշվում է Թավուլի՝ նաև Երզնկա և Տարոն ներխուժելը[38]: 1608 թ. մեկ այլ հիշատակարանում էլ փաստվում է ավելի քան 20 հազար մարդու կոտորած ջալալիների կողմից[39]: Ջալալիների գործած ապօրինությունների հետևանքներն այնքան սարսափելի էին, որ անգամ շուրջ մեկ հարյուրամյակ անց հայ մշակութային գործիչ, մատենագիր, մաթեմատիկոս և աստղագետ Ավետիք Տիգրանակերտցին (XVII դ. երկրորդ կես – XVIII դ. առաջին կես) ավարառուական կենցաղ ունեցող աֆրիկյան մի ցեղի, որ բնակվում էր Եգիպտոսից հարավ, բնութագրում է հետևյալ կերպ. «...ցանել վարել չգիտեն, արուեստ և բանել չգիտեն. այլ են որպէս վայրի գազան և անասուն... **ճալալու են** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), զայլոց վաստակ կու խլեն»[40]:

Հետաքրքիր է, որ, ըստ Ա. Տվերիտինովայի և նրան հետևող Մ. Զուլալյանի, 1608-1610 թթ. ջալալիական շարժումները ղեկավարում էին արաբ և քուրդ առաջնորդներ[41]: Ինչպես նկատել է Ա. Հովհաննիսյանը, Երևանի՝ նույնիսկ դեռևս 1604 թ. գրավմանը պարսից զորքի շարքերում մասնակցած թյուլենջի և գյոք-դուլաք կոչվող 3 հազար ջալալիների մի մասը, ըստ Նայիմիի ժամանակագրության ուղղակի և Առաքել Դավրիժեցու անուղղակի (շահ Աբաս Ա-ի մոտ ապաստանած քրդերը) տեղեկության, քրդեր էին[42]: Արևմտյան ուսումնասիրողների մեծ մասը, հիմք ընդունելով օսմանյան սկզբնաղբյուրների տեղեկությունները, շարժման մասնակից զանգվածներին համարում է թյուրքալեզու, մասնավորապես՝ թուրքմենական կիսաքոչվորական ցեղերի ներկայացուցիչներ, որոնց մասին, սակայն, հիշատակություններն առավել հաճախ են Արևմտյան Հայաստանից արևմուտք ընկած փոքրասիական տարածքներում: Այնուամենայնիվ, ջալալիական շարժումն էթնիկականացնել հնարավոր չէ, քանի որ այն էթնիկական որևէ կոնկրետ հենարան չու-

---

[35] Նույն տեղում, էջ 237-238:

[36] Նույն տեղում, էջ 215:

[37] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 479:

[38] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, № 358, էջ 293-295:

[39] Տե՛ս նույն տեղը, № 388:

[40] «Բազմավէպ», 1897, թիվ 10, էջ 461-462: Տե՛ս նաև **Հ. Միրզոյան,** XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 40:

[41] Տե՛ս **Մ. Զուլալյան,** Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, էջ 139-140, 219-220:

[42] Տե՛ս **Ա. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Եր., 1959, էջ 81:

ներ և համալրվում էր մահմեդական այլևայլ ցեղերից:

Ջալալիական շարժման ժողովրդագրական գլխավոր հետևանքը ոչ այնքան բազմաթիվ զոհերն ու գերեվարվածներն էին, որքան սովը, որի մասին հիշատակումներն ի հայտ են գալիս դեռևս 1601 թ., երբ Կարա Յազըջին Սեբաստիայում կողոպուտ և կոտորած արեց, ինչի պատճառով էլ սով սկսվեց[43]: Հիշատակումները շատանում են 1604 թ., երբ ջալալիական շարժմանը գումարվում է թուրք-պարսկական հերթական պատերազմը: Խիզանում ընդօրինակված Յայսմաւուրքի 1604 թ. հիշատակարանում խոսվում է երկրի վիճակի մասին՝ սով, գերություն, կոտորած, ավերածություն, գիշակերություն, մարդակերություն, և Սեբաստիայի կողմերում «բազումք սովամահ եղեն»[44]: Մոկսի Ծպատ անապատում ընդօրինակված Շարակնոցի 1604 թ. հիշատակարանում Գրիգոր աբեղան գրում է, որ «նեղիմք ի սովոյ և ի սղութենէ հացի և ի հարկապահանջութենէ այլազգեաց»[45]: Վարդան Բաղիշեցու ժամանակագրության (XVII դար) համաձայն ևս 1604 թ. «եղև սով սաստիկ մինչ զի կերին մարդիկ զձի և զջորի այլ և զմիմեանս ևս»[46]: Մոկսի գավառակում գրված և Խիզանում ծաղկեցված Ավետարանի 1605 թ. հիշատակարանում գրիչ Հովհաննես քահանան գանգատվում է ծանր հարկապահանջությունից և գրում. «Եւ է սղութիւն մեծ...[47]: ...ի Սեաստու երկիր (իմա՝ Սեբաստիայի նահանգ – Մ.Մ.) շատք զտղայք կերան, և ի մեր երկիրս և ի ծովուս բոլորն Ժ (10) օր խոտով և բաջարով (բանջարով – Մ.Մ.) անցուցանէին, և բազումք սովամահ եղեն»[48]: 1605 թ. մի հիշատակարանում նորոգող Թումա երեցը գրում է, որ կատարել է իր գործը «ի դառն և ի նուրբ ժամանակիս՝ ի սով, և ի սուր, և ի մահտարաժամ ատենիս, որ ուտէին զամենայն գարշելիս, և զպիղծն շուն, և զկատու, և զմիս մեռելոց ուտէին, հայր և մայր իւրեանց զաւակն ուտէին»[49]: Մոկսի Սեպ գյուղում 1605 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Մխիթարը գանգատվում է հարկապահանջությունից, հացի թանկացումից և սղությունից, պարսից բանակի՝ Վանի վրա հարձակումից և արյունահեղությունից[50]: Փաստորեն, վերջին հիշատակարանի հեղինակը խոսում է սովի մեկ այլ պատճառի՝ թուրք-պարսկական պատերազմի մասին ևս:

բ) Թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ազդեցությունը սովի առաջացման վրա: Ջալալիական շարժմամբ հարուցված սովն ավելի մեծ ընդգրկում է ստանում օսմանյան զորահրամանատար Ջղալօղլի Սինան փաշայի՝ պարսկական արշավանքից դեպի Վան գալուց հետո, երբ նախ իր զորաշարժը, ապա պատասխան պարսկական ներխուժումն ու Վանի նահանգի հայ բնակչության կորուստները սովի խորացման պատճառ են դառնում: Արտամետում 1605 թ. ընդօրինակ-

---

[43] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 477:
[44] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, № 169, էջ 136-137:
[45] Նույն տեղում, № 180, էջ 152-153:
[46] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 394:
[47] Մեր կողմից բաց թողնված հատվածում նշվում են պարենային ապրանքների գները:
[48] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 180:
[49] Նույն տեղում, էջ 179:
[50] Տե՛ս նույն տեղը, էջ 191-192:

ված Ավետարանի հիշատակարանում գրիչ Կարապետ երեցը ներկայացնում է, որ Ջղալօղլին շահ Աբասի դեմ մարտերից հետո Վան վերադառնալիս «աւերեաց զՎանայ աշխարհն (իմա՝ Վանի նահանգը – Մ.Մ.) զամեն...: ... Զայն ժամ սովն կալաւ զարարածս, որ եղ[և] քիլայ ցորեան [ի ութ ափասի], [ապա] գնող կէր և ծախող չկէր... Որ ի սովու կերան հայք զշուն և զկատու, էշ և ձի և կաշիք նոցա: Աղքատք ժողովէին զերեք չորս տարու չոր ոսկերներն և սղկէին և ուտէին և կուտուց կուտուց մեռանէին... Որ կերաւ մայր զորդին, հայրն ծախեաց զորդին Բ (2) կորեկ հաց, որ մեռան ի սովու հազարք հազարաց և բիւրք բիւրոց...»[51]: Գրիչը ներկայացնում է նաև սովի պատճառով սկիզբ առած արտագաղթի մեծ ալիքը և սովյալների զանգվածային մահացության որոշ վիճակագրություն. «Եւ այն, որ մնաց փախեան ի Ջզիրէն (Ջեզիրէն – Մ.Մ.), ի Բաղդատ և յԱրաբստան, ի յԱսորեստան (իմա՝ Ասորիք – Մ.Մ.), ի Թաւրիզ, ի Ղազմին (Ղազվին – Մ.Մ.) և ի Խորասան և ի Գուռջըստան (իմա՝ Վրաստան – Մ.Մ.), և խազարէն (հազարէն – Մ.Մ.) մէկ չի դարձօ ի յետս, ամենեքեան մեռան ի ղարիբութիւն: [Որ] ի Ջզիրէն ի քաղաքն միայն իրեցներն [խսապ] արին ամենքն զիւրեանց թաղածն՝ ԽՌ (40000) մարդ էր մեռեր, թո՛ղ զայն որ ի բուքն խեղդեցան և կամ ի գետն անկան և թո՛ղ զայլ քաղքունէքն (քաղաքսն – Մ.Մ.), որ ի Սալմաստայ մինչև ի Գուռջըստան և մինչև յԸստամբուլ և հիւսիսակողմով մինչև յԱմիթ (յԱմիդ – Մ.Մ.) և յԱլապ (ի Հալէպ – Մ.Մ.) եղև անմարդաբնակ, որ առջք և գայլք, խոզք և մարդակերքն ի շուռ գային»[52]: Այստեղ հիշատակվող բուքը լրացուցիչ հանգամանք կարող էր լինել սովի խորացման համար: Բացի այդ, Կարապետ երեցը փաստում է, որ օսմանյան իշխանություններն անգամ այդ սոսկալի իրադրության պայմաններում աշխատում էին պարենավորման խնդիրը լուծել հայ բնակչության հաշվին. «Եւ այն անօրէն և պիղծ գազանաբարւոյ ազգն Հռոմեցիքն (իմա՝ օսմանյան բանակը – Մ. Մ.) բռնէին զմարդիքն Հայոց, չարչարէին և զնոսա ամաւթն ծամէցնէին և ասէին «Մեզ հաց և զահրա տուէք». և նոքա ոչ ունէին զատ որ տային նոցա [և] չարաչար մահուամբ սպանանէին զհայս»[53]: Գրիչը, ինչպես ուշմիջնադարյան արևմտաեվրոպական հեղինակները Եվրոպայում

[51] Նույն տեղում, էջ 193-194: Հմմտ. «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 38, էջ 2-3, **Մ. Բարխուտարեանց,** Արցախ, Բագու, 1895, էջ 297-298, **С. Тер-Аветисян,** Город Джуга, Тбилиси, 1937, էջ 48-49:

[52] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 194: Հմմտ. «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 38, էջ 2-3, **Մ. Բարխուտարեանց,** նշվ. աշխ., էջ 297-298: Ի դեպ, Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը 244 համարի ներքո հրատարակած այս հիշատակարանում մահացածների համար նշել են ՌԽ թիվը, որը չի համընկնում փակագծերում նշված 40 հազարի հետ: Քանի որ ձեռագիր Ավետարանը կորած է համարվում, ուստի անճշտության պատճառը հասկանալու համար մենք դիտարկել ենք հիշատակարանի սկզբնական հրատարակությունները: Առաջին անգամ 1876 թ. այն հրատարակել է Աղեքսանդր Արարատյանցը, որին Ավետարանը ցույց է տվել Գանձակի Փիբ գյուղի հոգևորական Տ. Պողոս քհն. Մամիկոնյանը: Հրատարակության մեջ նշված է ոչ թե ՌԽ, այլ ԽՌ (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1876, թիվ 38, էջ 2): ԽՌ է նշված նաև երկրորդ հրատարակությունում (տե՛ս **Մ. Բարխուտարեանց,** նշվ. աշխ., էջ 297): Քանի որ առաջին երկու հրատարակիչները Ավետարանը տեսնելու հնարավորություն են ունեցել, ուստի հատվածը մեջբերելիս գրել ենք նրանց հրատարակած տվյալը:

[53] Նույն տեղում:

բռնկված սովի և համաճարակների պարագայում, այս ամենը համարում է մեր մեղքերի համար աստվածային պատիժ և նշում, որ Աստված «յառաջ եբեր զխաշանց մահն, որ երեկ յարևելից և գնաց մինչև ի մուտս արևու, ի հիւսիսոյ ի հարաւ...: Ամէն յիննըսէն մէկն մնայր: ...Եւ յետոյ եբեր զմարդկային պատուհասն, որ ի սովու կերան զմիմեանս..., որն մեռան կորան, որն **թուրքացան** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), և որն փախան, այլ ոչ դարձան իրենց տեղն...: Մինն ի բազմաց եղկելի գծողս էր, որ առի զընտանիքն իմ և գնացի ի Ջզիրէն»[54]: Այս հիշատակարանից պարզ է դառնում, որ սովի և ժանտախտի տարածմանը զուգընթաց տարածում է ունեցել դրանց հետ առաջին հայացքից որևէ կապ չունեցող թուրքացման կամ մահմեդականացման գործընթացը, ինչը պայմանավորված էր ապրուստի նվազագույն միջոցների հասանելիության՝ կրոնական պատկանելությամբ տարբերակված լինելու հետ, որը փաստվում է նաև մեր մեջբերած մյուս հիշատակարանների տվյալներով:

Սովի աշխարհագրական ընդգրկման տեսանկյունից ուշագրավ է, որ 1601 թ. այն հիշատակվում էր միայն Սեբաստիայի նահանգում, իսկ 1604-1605 թթ.՝ նույն նահանգում, ինչպես նաև ջալալիական շարժման մնացյալ օջախներում (հատկապես՝ Հարավարևմտյան Հայաստանում ու Հայոց Միջագետքում) և հատկապես թուրք-պարսկական պատերազմական գործողությունների թատերաբեմում գտնվող Վանի նահանգում:

1606 թ. սկսած՝ սովի մասին հիշատակումներն աղբյուրներում սովորական երևույթ են դառնում՝ ընդգրկելով Հայաստանի գրեթե ողջ տարածքը: 1606 թ. մի հիշատակարանում խոսվում է հայոց ազգին համակած սովի և գերեվարումների մասին. «Ահա Գ (3) ամ է որ իբրև զուռ (զուռի – Մ.Մ.) կը դողամք ի շահէն Պարսից: Եւս առաւել զայս տաին (տարին – Մ.Մ.), թէ որպիսի սով եղև ի Խարսայ (Կարսայ – Մ.Մ.) քաղաքին և իւր բոլոր գաւառքն: Հանց սով եղև որ շուն և կատու ուտէին, բայց յետոյ մեռանէին»[55]: Այս հիշատակումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ փաստում է 1555 թ. Ամասիայի հաշտությամբ Կարսի չեզոք գոտու ամայացումից և 1604 թ. շահ Աբասի կողմից նույն տարածքից շուրջ 20 հազար մարդկանց բռնագաղթից[56] հետո Կարս քաղաքում և նրա գավառներում բնակչության առկայության մասին, ինչը հաճախ կասկածի տակ է դրվել թուրք պատմաբանների կողմից:

1606 թ. սովի մասին հիշատակումները ոչ թե սահմանափակվում են ջալալիական շարժման մայր օջախով կամ թուրք-պարսկական պատերազմների անմիջական թատերաբեմով, այլ աչքի են ընկնում Հայաստանի և հարակից տարածքների համընդհանուր ընդգրկմամբ: Հակոբ Կարնեցին իր ժամանակագրության մեջ գրում է. «Ի թվականու-

---

[54] Նույն տեղում: Գրիչը ներկայացնում է, որ օտարության մեջ վախճանվել են կինը, եղբայրը, հարսները, որդին և դուստրերը:

[55] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 236: Մարտիրոս Խալիֆայի ժամանակագրությամբ (XVIII դար) ևս փաստվում է, որ 1606 թ. «մեծ սով անկաւ, որ շուն և կատու կերին, նաև մարդագայլքն երևեցան» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 482):

[56] Տե՛ս **Հ. Առաքելեան,** Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մաս Ա, Վիեննա, 1911, էջ 63-64:

թեանս մերում ՌԾԵ (1606) սով սաստիկ է եղեար, որ մարդ զմարդ, շուն և կատու կերեալ են ի վերին աշխարհս[57] բովանդակ՝ Յանկիւրու և Ղայսարու (Կեսարիոյ – Մ.Մ.) հետ մինչև ի Թարվէզ (Թաւրէզ – Մ.Մ.), Վան և Բաղէշ, Համթայ սանճախն (յԱմդայ սանջակն – Մ.Մ.), բոլորն Գ (3) տարի»[58]: Անանուն ժամանակագրության (XVII դար) համաձայն՝ 1606 թ. «խիստ սով եղև ի քաղաքն Վան և Յարզրոում… և այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն, որ ոչ կարէին թաղել...: ...Դարձեալ ի սոյն թուին սաստիկ սով եղև յԸստամպօլու մինչև ի Թավրէզ, ի Բաղդադայ մինչև ի Դամուր դափին...»[59]: 1606 թ. մեկ այլ հիշատակարանում պարսկա-օսմանյան արյունահեղ բախումների ընթացքում խոսվում է պարսից բանակի կողմից Վանի ուղղությամբ արշավանքի սոսկալի հետևանքների մասին, քանզի «բազում կոտորում արաց հայ ու տաճիկ, բազում քահանայք, բազում գերիք տարան, որ թիւն ու համարն չիմացանք», և Ջղալօղլիի՝ դեպի Ամիդ նահանջից հետո Ամիդից մինչև Թավրիզ հացահատիկի դաշտերի ոչնչացման պատճառով հացի սոսկալի գնաճ գրանցվեց, ու այնպիսի սով սկսվեց, որ, հիշատակարանի հեղինակի պատկերավոր ձևակերպմամբ, մինչև իսկ մի տեղում 15 հոգու էին թաղում[60]:

1606 թ. սովի մասին հիշատակումներում առանձնանում է Վանի նահանգը: 1606 թ. գրված Յայսմաւուրքի հիշատակարանում գրիչներ Ստեփանոսը և Կարապետը ներկայացնում են շահ Աբասի բռնագաղթից հետո թուրք զորահրամանատար Ջղալօղլի փաշայի կողմից ռազմական գործողությունների ծավալման ժամանակ հանդիպած դժվարությունները. «Եւ սարտարն գնացեալ ի վերայ աւեր տեղացն ի վեր, և խիստ նեղացեալ. զի աւուրք աշնանային էր՝ ձիւն և ցուրտ խիստ, դարձաւ յետ»[61]: Նա ստիպված ձմեռում է Վանում, իսկ նրա դեմ հաջորդ տարի ուղարկված Ալահվերդի խանը «երեք սօլթանով» պաշարում է Վանը և 1606 թ. հուլիսի 26-27-ը «քան զհազարն աւելի քրիստոնեայք սրախոհող (սրախողխող – Մ.Մ.) արարին, և կամ քանի կին և անմեղ տղայք գերի վարեցին ի քրիստոնէից»[62]: Թավրիզի մատույցներում օսմանյան բանակի պարտությունից հետո «եղև սով սաստիկ և թանգութիւն (թանկութիւն – Մ.Մ.) յերկիրն Վանայ, յԱրծկէ, յԱրճէշ, և ի Խլաթ, ի Բաղէշ, ի Հիզան (Խիզան – Մ.Մ.), ի Մոկս, ի Շատախ: Ամենեքեան բէզար եղէն ի տանց և ի բնակութեանց իւրեանց. և ցրուեցան յաշխարհէ յաշխարհ, և անկաւ մահ ի վերայ նոցա՝ ընդ որ գնացին ամենեքեան մեռան»[63]: Այս

---

[57] Հակոբ Կարնեցին «Վերին Աշխարհ» կամ հատկապես «Վերին Հայք» անունով է հիշատակում Էրզրումի նահանգը: Սա բխում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի անվանումից (տե՛ս **Մ. Մալխասյան,** Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ պատմաաշխարհագրական հետազոտությունների սկզբնաղբյուր (վարչաքաղաքական և ժողովրդագրական ուսումնասիրություն), «Էջմիածին», 2010, թ. Է, էջ 110-125):

[58] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 239:

[59] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 283: Դամուրը քաղաք էր Միջերկրական ծովի արևելյան ափին, որն այժմ կազմում է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի ագլոմերացիայի մի մասը:

[60] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 205:

[61] Նույն տեղում, էջ 211:

[62] Նույն տեղում:

[63] Նույն տեղում, էջ 211-212: Գրիչները նկարագրում են հացահատիկի գնաճը և ամենուրեք վրա հասնող մահվան սոսկալի տեսարանները: Վանի եկեղեցիներին 1606 թ. նվիրաբեր-

հիշատակարանի տեղեկություններից ակնհայտ է դառնում սովին և ժանտախտին զուգահեռ մեծ թափ առնող զանգվածային արտագաղթը:

1606 թ. ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում ասվում է, որ Սեֆյանների բանակի հակահարձակման ժամանակ Վանում «զբաղում կոտորեաց ի յայլազգեաց և քրիստոնէից», իսկ օսմանյան բանակի պատասխան արշավանքի ժամանակ ավերածությունների օջախ է դարձել Աղբակն իր շրջակա տարածքներով[64]: Խիզանում և Վանում գրված Յայսմաւուրքի 1606 թ. հիշատակարանում Սարգիս գրիչը վերը նշված հիշատակագիրների պես գանգատվում է սովից, զանգվածային սպանություններից ու գերեվարություններից, գյուղերի ավերումից, բնակչության պարբերական տեղաշարժերից, Կոստանդնուպոլսից մինչև իր հայրենի գավառ ավերակ վիճակից, հացահատիկի, ալյուրի, յուղի և առաջնային սպառման այլ մթերքների գնաճից, դրա հարուցած սովից և բարձր մահացությունից՝ արձանագրելով, օրինակ՝ միայն մեկ դրվագում միանգամից 12 հոգու մահ[65]:

Փաստորեն, թուրք-պարսկական պատերազմի ակտիվ փուլն ուղղակիորեն նպաստում էր սովի տարածմանը:

գ) Եղանակային պայմանների փոփոխությունների և մորեխների տարածման ազդեցությունը սովի ծավալման վրա: Սկզբնաղբյուրներում հաճախ տեղ են գտել վկայություններ սաստիկ շոգի և մորեխների տարածման մասին: Ս. Ուայթն Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում սովի բռնկման պատճառների մեջ կարևորում է Հայաստանից հարավ-արևելք ընկած տարածքներում ջալալիական շարժմանը նախորդող մի քանի տարիներին նկատված չափազանց չորային եղանակը[66]: Եղանակային նման միտումների առկայությունը հաստատվում է նաև վերջերս կատարված համալիր հետազոտություններով[67]:

Առաքել Դավրիժեցին միաժամանակ հիշատակում է, որ ջալալիական շարժմանը և թուրք-պարսկական պատերազմական գործողություններին համընթաց Միջնաշխարհում, այսինքն՝ Հայաստանի կենտրոնական նահանգներում մորեխներ հայտնվեցին, որոնք ոչնչացրին արտերը, ինչից հետո «եղև սով սաստիկ. և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի»[68]: Բնակիչների մի մասը հեռացավ, մյուս մասը ստիպված ուտում էր ցանկացած կենդանի (ձի, ջորի, ավանակ, շուն, կատու), և

ված մի Ավետարանի հիշատակարանում գրիչ Հովհաննես վարդապետը ներկայացնում է Ջղալողլիի՝ Թավրիզից Վան վերադարձից հետո հացահատիկի գնաճի և սովի մասին, գրում, որ մարդիկ վաճառում էին իրենց այգիները, տները և սրբությունները, ինչպիսին 1573 թ. այդ Ավետարանն էր, որ Վանում ոմն Սմբատ գնել էր: Գրիչն ասում է, որ շահը Արարատյան երկրի, այսինքն՝ Չուխուր-Սաադի բեկլարբեկության «զժողովուրդն զամենեսեան առեալ տարաւ տարադէպ յարևելս՝ ի քաղաքն Ասպահան» (նույն տեղում, էջ 213):

[64] Տե՛ս նույն տեղը, էջ 226:

[65] Տե՛ս նույն տեղը, էջ 201-202: Գրիչը այս ամենի համար մեղավոր է համարում պարսից և օսմանյան տիրակալներին, ընդ որում՝ նշում է, որ շահ Աբասը հասել է մինչև Խոշաբի դաշտ՝ Մահմտանքի գավառ:

[66] Տե՛ս **S. White,** op. cit., էջ 141-143:

[67] Տե՛ս **Ed. Cook et al.,** Old World megadroughts and pluvials during the Common Era, Science Adv., Nov. 6, 2015;1:e1500561, էջ 2-3:

[68] **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 108:

անգամ գիշակերության ու մարդակերության դեպքեր էին լինում[69]:

Մորեխների մասին տեղեկությունը հաստատվում է նաև ժամանակակից մի հիշատակարանի տվյալով, ըստ որի՝ Վանում 1607 թ. մորեխներ են տարածվել[70]: Սա 1606 թ. ցանքատարածությունների՝ անմշակ մնալու արդյունք կարող էր լինել, քանի որ հողը մեկ ամբողջ տարի անմշակ թողնելը մորեխների կտրուկ բազմացման համար նպաստավոր պայման է:

Փաստորեն, մի կողմից դեռևս դարասկզբից նկատվող երաշտը, մյուս կողմից՝ հատկապես 1607 թ. մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը լրացուցիչ պատճառ են դարձել առանց այն էլ ջալալիական շարժումների ու թուրք-պարսկական պատերազմի հետևանքով սկիզբ առած սովի տարածման:

դ) Մեծ սովի ժամանակագրական և տարածքային ընդգրկումը: 1606 թվից սովի մասին աննախադեպ քանակով հիշատակությունները և դրանցում (օրինակ՝ XVII դարի հեղինակներ Հակոբ Կարնեցու, Զաքարիա Քանաքեռցու և Գրիգոր Դարանաղցու[71] մոտ) 3 տարի տևողության հիշատակումը ցույց են տալիս, որ ամբողջ Հայաստանը և հարակից տարածքներն ներառած Մեծ սովն իսկապես տևել է 3 տարի՝ ընդգրկելով ամբողջ 1606-1608 թթ. և 1609 թ. սկիզբը: Այս մասին շատ կարևոր են Առաքել Դավրիժեցու տեղեկությունները: Նա հետևյալ կերպ է նկարագրում սովի տարածումը. 1606 թ. սաստիկ սով եղավ Վանում և Էրզրումում, մարդակերությունն ու հմակերությունը տարածվեցին, «այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն, որ գլուխ չելան թաղելով, խոր փորեցին և ներս լցին»: Սովը կրկնվեց Կոստանդնուպոլսից մինչև Թավրիզ, տարածվեցին գայլերի հարձակումները մարդկանց վրա, ինչն անվանվեց «մարդագայլ»[72]:

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ սովը դեռևս թույլ արտահայտվածությամբ սկսել է 1606 թ., 1607-1608 թթ.՝ սաստկացել, 1609 թ.՝ թուլացել, 1610 թ.՝ առհասարակ վերացել[73]: Ժամանակագրական այս ընդգրկումը հաստատվում է նաև այլ աղբյուրներով, օրինակ՝ մի ժամանակագրության համաձայն՝ «...եղև սկիզբն սովուս ՌԾԵ (1606) թվին, յորում ամի թոյլ էր սովն, և ի ՌԾԶ (1607) և ՌԾԷ (1608) կարի սաստկացաւ և ՌԾԸ (1609)-ին թողացաւ, ի ՌԾԹ (1610) բարձաւ ողորմութեամբն Աստուծոյ...»[74]: Ուտիքի Զակամ (Զեգամ) գավառի Ղարամուրատ գյուղում 1610 թ. գրված հիշատակարանում գրիչ Դավիթ եպիսկոպոսը խոսում է 1606 թ. սովի սաստկացման, 2 տարի տևելու և շատ զոհերի մասին[75]: Այդուհանդերձ, 2 տարվա հիշատակումը վերաբերում է միայն տվյալ վարչամիավորին և, բացի այդ, պայմանավորված է նրանով, որ 1609 թ.

---

[69] Տե՛ս նույն տեղը, էջ 109-112:

[70] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, № 326, էջ 264:

[71] Տե՛ս **Գրիգոր Դարանաղցի,** նշվ. աշխ., էջ 35-37:

[72] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 478: Պատմիչը ներկայացնում է սովի դրվագներ Սեբաստիայում, Մոկսում, Էրզրում, և օրինակ՝ Բասենին մերձակա Խալիյազի գավառում փողոցներում մահացածների դիակներն հոշոտող մարդագայլերի սոսկալի տեսարանը (տե՛ս նույն տեղը, էջ 109-111):

[73] Տե՛ս նույն տեղը, էջ 112:

[74] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 517-518:

[75] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 368:

միայն առաջին ամիսներին են սովի մասին հիշատակումները:

Ինչպես տեսնում ենք վերը ներկայացված օրինակներից, 1606 թ. սովի մասին հիշատակումներ կան Հայաստանի տարբեր շրջաններում: 1606 թ. մի հիշատակարանում խոսվում է ալյուրի չափազանց թանկացման հետևանքով Էրզրում քաղաքում սաստիկ սովի մասին[76]: 1606 թ. մեկ այլ հիշատակարանում խոսվում է հատկապես Արևմտյան Հայաստանում սաստիկ սովի մասին. «Եւ հանց սղութիւն է ի Հոռոմաց տունն (իմա՝ Օսմանյան կայսրությունում – Մ.Մ.), որ բազումք մին զմին կերան, և շատք սովամահ եղեն ի Սէւաստու մինչ ի յԱրզրում, ի Քրդաց տուն, ի Վան, և մինչ ի Գանջայ, և ի Թաւրէզ»[77]: Անանուն Վանեցու ժամանակագրության (XVII-XVIII դարեր) համաձայն՝ 1606 թ. «սաստիկ սով եղև ի քաղաքն Վան և յԱրզրում. մինչ զի կապիճ կորեկն դահեկան մի եղև, յորոյ պատճառէ այնչափ մարդ մեռան որ թաղել ոչ կարէին...»[78]: 1606 թ. գրված մի Յայսմաւուրքի հիշատակարանում ասվում է. «...սուրով կոտորեցo (կոտորեցաւ, իմա՝ կոտորեցան – Մ.Մ.) զամենայն քրիստոնեայք, և գերի անգաւ (անկաւ – Մ.Մ.) բազում խաչ և Աւետարան, և սբ. գրանք, և շատ բազում արդար մանուկ քրիստոնէից. և եղև սով սաստիկ, խիստ, որ Հայք զտղայքն վաճառէին ի ձեռն անաւրինաց վասն սովու և վասն դառնութեան ժամանակի»[79]:

Սովի աշխարհագրական սահմանների ընդլայնումն ակնհայտ է դառնում 1607 թ. հիշատակությունների քննությունից: Ժամանակագրական մի հաղորդման համաձայն՝ 1607 թ. «մեծ սովն եղև և զմիմեանս կերան»[80]: Խիզանում և Սպահանում 1607 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Խաչատուր Խիզանցին գրում է, որ Թավրիզի մոտ Ջղալ-օղլիի պարտությունից հետո «ի յԱմթայ մինչ ի Թաւրէզ ՃՌ (100 000) ոգի՝ աւելի մեռան ի սովոյ, զի բազումք՝ հայրն զորդին կերաւ և մայր՝ զդուստրն…, և այլ բազում նեղութիւն եղև Հայոց ազգիս…»[81]: Այս հիշատակարանը, փաստորեն, եզակիներից է, որ հիշատակում է զոհերի թիվը: Փաստորեն, 1607 թ. Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում սովի մասին հիշատակումներ կան: Այսպես, Ախալցխայում 1607 թ. հիշատակարանում նշվում է, որ 3 տարի խիստ սով է եղել[82]: 1607 թ. Խիզանում գրիչ Գրիգոր քահանան գանգատվում է, որ օսմանյան բանակի՝ շահի դեմ արշավանքի ժամանակ և վերադարձից հետո «եղև բազում քաղաքաց և գիւղօրէից աւերումն և կործանումն. մինչ զի ամենայն աշխարհս անբնակ և անապատ դարձաւ, և շրջեցան մարդիկ յերկրէ յերկիր, և ի քաղաքէ ի քաղաք», և գանգատվում սովից՝ նկարագրելով սոսկալի տեսարաններ[83]:

Թեև սովը 1606-1607 թթ. ընդգրկում էր արդեն նաև Էրզրումի և Ախալցխայի նահանգները, այդուհանդերձ Արևմտյան Հայաստանում նրա

---

[76] Տե՛ս նույն տեղը, էջ 214:
[77] Նույն տեղում, էջ 220:
[78] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 412:
[79] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 233:
[80] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 518:
[81] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 260:
[82] Տե՛ս նույն տեղը, էջ 262:
[83] Տե՛ս նույն տեղը, էջ 265:

հիմնական օջախը Վանի նահանգն էր: Ռշտունյաց գավառում Պետրոս Նկարինցին 1607 թ. հիշատակարանում նկարագրում է դժբախտությունները. «…բազում պատուհաս երեկ ի վերայ ազգիս Հայոց, վասն ծովացեալ մեղաց իմոց. [զի] բազումք սովամահ եղէն, և բազումք ի ձիւն և ի բուքն խեղդեցան, և բազումք ի գերութիւն անկան, և բազումք ի հաւատոց ելան…»[84]: Բաղեշի Գոմոց վանքում 1607 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում ևս խոսվում է սովի մասին[85]: Բաղեշի Ամիրդոլու վանքում 1607 թ. գրված հիշատակարանում գրիչ Բարսեղ վարդապետը խոսում է սովի և գերեվարությունների մասին[86]: 1607 թ. մի հիշատակարանում էլ նկարագրված են շահի կողմից Վանի ուղղությամբ ուղարկված զորամասերի ոճիրները. «Եւ առաքեաց զոմն ժանդաբարոյ (ժանտաբարոյ – Մ.Մ.) ի վերայ բերդին Վանա[յ], բազում զաւրաւք: Եւ նա եկեալ բազում ոճիրս գործեաց, զի զծովու բոլորն զամենայն առ հասարակ ի սուր սուսերի մաշեաց, մինչ զի անբնակ դարձաւ ի մարդոյ և յանասնոյ: Եւ զվար և զվաստակ ձիոյ և ուղտոյ կեր ետուն և առ ոտն հարին. և ոչինչ [թողին որ] չարարին, և յետոյ գնացին ի տեղիս իւրեանց»[87]: Եվ երբ աշնանը սարդարը շարժվում է Թավրիզի ուղղությամբ և անհաջողություն կրելով՝ նահանջում դեպի Վան, «խիստ սաստիկ սով եղև ի քաղաք և ի գեղ և եղև Ա (1) քիլայ ցորեն և գարին Ժ (10) կարմիր», և մարդիկ սովից ուտում էին ինչ պատահի, վաճառում նույնիսկ սրբությունները, այգիներն ու տները[88]:

Սովի սոսկալի դրվագներն ամենից շատ հիշատակվում են 1608 թ: Այս թվականին Սեֆյաններն Օսմանյան կայսրության դեմ նոր ռազմարշավներ են կազմակերպում դեպի Արևմտյան Հայաստան: Դեպքերի ականատես Ներսես Վարագեցին 1608 թ. հիշատակարանում գրում է շահի բանակի՝ Վանի ուղղությամբ 2 արշավանքների հետևանքով Վանում և Ոստանում հարուցած սովի, սպանությունների մասին՝ «եղև սով սաստիկ ի Վան և յՈստան՝ ի ծովու բոլորն առ հասարակ»[89]: Առաքել Դավրիժեցին էլ հաղորդում է, որ Սեֆյան բանակը 1608 թ. հուլիսի 30-ից օգոստոսի 1-ը Էրզրումի «երկիրս ամէն թէ գիւղ է թէ քաղաք վաստակն խիստ այրեաց»[90]: Ավելին, 1608 թ. Ամիրգունա խանը զորք է առաքել Բզնունիք, և կոտորվել են բազմաթիվ քրիստոնյաներ, ինչի պատճառը, ըստ դեպքերին ականատես ժամանակագրի, Ջեզիրեի տեր «ազգաւ մար», այսինքն՝ քուրդ Շարաֆ խանն էր, որ «զքրիստոնեայս արար ընչաթափ և սովալլուկ»[91]: Փաստորեն, այս տեղեկություններով ևս մեկ անգամ փաստվում է, որ թուրք-պարսկական պատերազմի թեժացումը մեծապես նպաստել է սովի սաստկացմանը՝ 1608 թ. դարձնելով Մեծ սովի բարձրակետը:

---

[84] Նույն տեղում, էջ 265-266:
[85] Տե՛ս նույն տեղը, էջ 272:
[86] Տե՛ս նույն տեղը, էջ 276:
[87] Նույն տեղում, էջ 278:
[88] Տե՛ս նույն տեղը:
[89] Նույն տեղում, էջ 303-304: Հիշատակարանում թվարկվում են Աղբակի իշխան պարոն Արազիզը, նրա եղբայր պարոն Միհերը, որ «բազում խնամս տանին ի վերայ քրիստոնէից»:
[90] **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 479:
[91] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 187:

1608 թ. հիշատակություններն ընդգրկում են ոչ միայն պատերազմական գործողությունների բուն թատերաբեմը, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը: Գրիչ Հակոբ Զեյթունցին 1608 թ. Կեսարիայում գրած հիշատակարանում խոսում է Մարաշին ու Կեսարիային պատած սովի մասին[92]: Կեսարիայում 1608 թ. գրված մեկ այլ հիշատակարանում ևս գրիչը գանգատվում է ջալալիների ավերածություններից և հացի թանկացումից[93]: Սովորական բնույթ են կրում մարդագայլի մասին հիշատակումները, օրինակ՝ 1608 թ. «մեծ սովն անկաւ, որ շուն և կատու կերին. նաև մարդագայլն երևեցաւ»[94]: 1608 թ. Ծարի Ատրենիս գյուղում գրված հիշատակարանում խոսվում է շահի՝ Շիրվան շարժվելուց հետո սովի և մարդակերության, սննդամթերքի բացակայության մասին[95]:

1608 թ. Խիզանում գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Գրիգորը գանգատվում է քուրդ պարոն Միր Հասանի հարկապահանջության և բռնության պատճառով սովի սաստկացման մասին, շեշտում Ջղալօղլիի և շահի միջև բախման հետևանքները՝ անմարդաբնակ քաղաքներ և գյուղեր, տեղահանություն, թափառաշրջություն, հացահատիկի և յուղի գնաճ, սով, գիշակերություն[96]: 1608 թ. Վանում գրված Ավետարանի հիշատակարանում ևս ներկայացված են Ջղալօղլիի և շահի միջև բախման հետևանքները՝ անմարդաբնակ քաղաքներ և գյուղեր, տեղահանություն, թափառաշրջություն, հացահատիկի և յուղի գնաճ, սով, գարշակերություն[97]:

1608 թ. Էրզրումի Կան գյուղում գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Սիմեոն երեցը գանգատվում է թուրք-պարսկական պատերազմից և դրա հարուցած սովից ու մահտարաժամից, առաջնային սպառման ապրանքների սոսկալի գնաճից, ընտանիքների քայքայումից, ջրի սակավությունից: Հետաքրքիրն այն է, որ նա ներկայացնում է իր իսկ տեղահանման պատմությունը: Այսպես, նա նախկինում բնակվել է Բասենի Կնտեղի գյուղում, իր մանկության տարիներին գյուղը բավականին շեն վիճակում է եղել. գյուղում եղել է 12 օրորոց մեկ տանը, 3 եպիսկոպոս, 4 քահանա, 3 սարկավագ, 2 ջրաղաց, 1 ձիթհան և այլն, գլխահարկը գնացել է սուլթանին, սակայն հիշատակարանի շարադրումից քիչ առաջ Բասենն ավերվել է, իր գյուղում կանգուն շինություն չի մնացել, իսկ ինքը փախել և հաստատվել է Կան գյուղում՝ ոմն քրիստոնյա Լաջինի տանը[98]: Փաստորեն, այստեղ ներկայացված է Հայաստանին այդ ժամանակաշրջանում շատ բնորոշ ներքին միգրացիայի մի օրինակ:

1609 թ. սովի մասին հիշատակումները բնորոշ են միայն տարեսկզբին, իսկ հետագայում սովը նահանջում է: Գրիգոր Դարանաղ-

---

[92] Տե՛ս **Ա. Ալպօյաճեան,** Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 644:
[93] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 322-323:
[94] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 355:
[95] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 291-292:
[96] Տե՛ս նույն տեղը, էջ 312-313:
[97] Տե՛ս նույն տեղը, էջ 301-302:
[98] Տե՛ս նույն տեղը, էջ 314-315:

ցին, ներկայացնելով բնակավայրերի դատարկվածության հետևանքով ազարակների անխնամ մնալու և հետևաբար սովը շարունակվելու մասին՝ հաղորդում է, որ 1609 թ. Մուրադ փաշան հարազատ բնակավայրերից հեռացած մարդկանց վերադարձնելու թույլտվություն է ստացել սուլթանական հրովարտակով: Փաստորեն, Ահմեդ Ա-ն (1603-1617), հակառակ մայրաքաղաքից տեղահանման արգելքի մասին սուլթան Սուլեյմանի հրապարակած օրենքի, հրամայեց մայրաքաղաքից և այլ խոշոր քաղաքներից նախկին բնակավայրերը վերադարձնել գաղթականներին՝ ազատելով նրանց 3 տարվա հարկերից[99]:

Հատկանշական է, որ ջալալիական շարժումները Արևելյան Հայաստանում ևս նպաստել են սովի տարածմանը: Այստեղ ջալալիները ներթափանցել են միայն շահ Աբասի կազմակերպած բռնագաղթին հաջորդած անիշխանության ժամանակահատվածում: Մանր ժամանակագրություններից մեկի համաձայն՝ բռնագաղթից հետո ելուզակների մի խումբ, «զոր ջալալի ասեն ի Տաճկաց կողմանէն, եկան Արարատյան երկիր, գիշերագնաց եղեալ զննէին և որոնէին, եթէ ուր ուրեք գտանի մարդ ի վերայ հասեալ կոտորէին և զտղայս գերէին, զտունս և զեկեղեցիս աւար հարկանէին մինչև զսովն ի յերկիր ձգեցին. ապայ եղեն մարդակեր, կալեալ եպիսկոպոս մի ի Մօղնոյ (Մուղնոյ – Մ.Մ.) վանից խորովեցին և կերան»[100]: Առաքել Դավրիժեցին ևս հավաստում է ջալալիական գործողությունների հետևանքով Արևելյան Հայաստանում սովի սաստկացման մասին. «Եւ այսպէս զամենայն գեղօրայս գաւառացն Արարատու յաւեր և յապականութիւն դարձուցին. և ի կերակրելի սերմանեաց և ի բնակչաց թափուր արարին»[101]: Ըստ պատմիչի՝ նույնը շարունակվել է Ախալցխայի նահանգում[102]:

ե) Մեծ սովի ժողովրդագրական հետևանքները: Ընդհանուր առմամբ՝ սովի և համաճարակների պատճառով 1606-1609 թթ. Հայաստանում զոհվել է մի քանի հարյուր հազար մարդ, հայրենիքից հեռացել են տասնյակ հազարավոր մարդիկ, բնութագրական է եղել նաև ներքին միգրացիան: Հիշատակարաններից միայն երկուսում են ներկայացվում սովից վախճանվածների թվաքանակի մասին տվյալներ, որոնց համադրումից ստացվում է առնվազն 140 հազար զոհ, ինչը, անշուշտ, չի կարող արտահայտել զոհերի ամբողջ թիվը, քանի որ այն վերաբերում է միայն Հարավային Հայաստանին, մինչդեռ սովն ընդգրկել է ոչ միայն Հայաստանի հարավային և արևմտյան, այլև կենտրոնական, հյուսիսային և արևելյան շրջանները: Ջալալիական շարժման, շահ Աբասի բռնագաղթի, թուրք-պարսկական պատերազմի, երկարամյա երաշտի և մորեխների տարածման հետևանքով 1606-1609 թթ. տեղի ունեցած համատարած սովն անհրաժեշտ ենք համարում անվանել «Մեծ սով»[103], քանի

---

[99] Տե՛ս **Գրիգոր Դարանաղցի,** նշվ. աշխ., էջ 145:

[100] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 184:

[101] **Առաքել Դավրիժեցի,** նշվ. աշխ., էջ 106:

[102] Տե՛ս նույն տեղը, էջ 107:

[103] Այս անվանումը մեր կողմից առաջ է քաշվել դեռևս 2016 թ. (տե՛ս **Մ. Մալխասյան,** Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին // «Հայագիտության հարցեր», 2016, թիվ 1 (7), էջ 102):

որ այն իր տարածքային և ժամանակագրական ընդգրկմամբ ու զոհերի թվով աննախադեպ է եղել հայոց պատմության մեջ:

Մեծ սովը խիստ բացասաբար է անդրադարձել բնակչության վերարտադրության բնականոն շրջափուլի վրա: Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակում) մեր կողմից հաշվարկված XVII դարի առաջին կեսի՝ միայն հստակ թվագրում ունեցող տապանագրերի ու խաչքար-մահարձանների վիմագրերի ավելի քան մեկ երրորդը (38,2 %-ը)[104] վերաբերում է դարի առաջին տասնամյակին, այսինքն՝ այն ժամանակահատվածին, երբ տեղի են ունեցել շահ Աբաս Ա-ի կողմից կազմակերպված բռնագաղթը և 1606-1609 թթ. Մեծ սովը: Հատկանշական է, որ կոնկրետ Մեծ սովի շրջանին է առնչվում դրանց մոտ կեսը՝ ընդհանուրի շուրջ 17,5 %-ը, ինչն ինքնին խոսում է այդ ժողովրդագրական աղետի ծավալների մասին:

Բանալի բառեր – *Մեծ սով (1606-1609 թթ.), ժողովրդագրական ճգնաժամ, ջալալիական շարժում, 1603-1618 թթ. թուրք-պարսկական պատերազմ, 1604 թ. հայ բնակչության բռնագաղթ, Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան*

МИКАЭЛ МАЛХАСЯН – ***Страшный голод 1606–1609 гг. в Армении.*** – После джалалийского восстания 1596–1610 гг., массовой депортации армянского населения в центральные области Ирана (1604), осуществлённой шахом Аббасом I, и турецко-персидских войн 1603-1618 гг. в Армении разразился голод, заметно повлиявший на демографические процессы. Ряд источников единодушно утверждают, что голод охватил все азиатские провинции Османской империи и северо-западные районы государства Сефевидов, включая практически всю Армению. Последствиями оказались многочисленные жертвы и эмиграция местного населения, в первую очередь армянского. Учитывая масштабы бедствия, его следует назвать величайшим в истории армянского народа голодом. Этот голод негативно повлиял как на динамику роста населения, так и на уровень его жизни.

Ключевые слова: *голод 1606–1609 гг., демографический кризис, джалалийское восстание, турецко-персидские войны, депортация армянского населения, Западная Армения, Восточная Армения*

---

[104] Տե՛ս նույն տեղը: Հաշվարկի հիմքը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. II, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1960, էջ 68, 73-74, 76, 117, 122, 135, պր. III, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1967, էջ 19, 32, 43-44, 46, 47, 63, 65, 184, 200-202, պր. IV, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1973, էջ 15, 16-17, 28-29, 31-37, 42, 47-48, 105-106, 111-112, 129, 137-141, 144-145, 171-173, 178, 179-181, 192-193, 202-203, 206-207, 236-239, 244-247, 254-259, 269-275, 281-283, 285, 298-301, 312, 319-325, 329-332, 340, 342, 347-348, 351-352, 356-359, 361, 362, 369-371, 379, պր. V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1982, էջ 18, 57, 94, 95, 98, 103-104, 147, 162-164, 172, 173, 179, 185-186, 193, 195, 233-237, 240, 244-246, 248, 250, 253-254, 255, 257-264, 265, 268, 272-274, պր. VI, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 30, 55, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Եր., 2012, էջ 35, 103, 105, 106, 221, 223, 271, 275, 296-297, 320-321, 392, 421, 444-445, 448, 449, 457, «Ազգագրական հանդէս», գ. Ե, Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 262-263:

MIKAYEL MALKHASYAN – ***The Great Famine in Armenia (1606-1609).*** – After the Jelali Rebellion (1596-1610), the massive deportation of the Armenian population from Armenia into the central provinces of Iran by the Persian Shah Abbas I (1587-1629) in 1604, and the Ottoman-Persian wars in the early 17th century, a massive famine started in Armenia which negatively impacted on the demographic processes. A lot of Turkish and Armenian sources confirm that the famine covered all the Asian provinces of the Ottoman Empire and the north-eastern regions of the Safavid state, almost entirely including Armenia. The consequences of the starvation were lots of casualties and emigration impacting first of all the native Armenian population. After a careful historical-comparative analysis of the sources, we concluded that the massive famine was characteristic for the whole territory of Armenia in 1606-1609. Taking into consideration the scale of this calamity, it must be called the Great Famine in History of Armenia. Therefore, the Great Famine negatively impacted on the population growth dynamics and the everyday life of the Armenian population.

Key words: *The Great Famine (1606-1609), demographic crisis, The Jelali Rebellion, The Ottoman-Persian War of 1603-1618, the deportation of the Armenian population in 1604, Western Armenia, Eastern Armenia*